

Արմավիրի մարզի Շենավան համայնքի ղեկավարի  
2012թ-ի առաջին կիսամյակի հաշվետվություն

2012թ-ի հուլիսի 10-ին ժամը 15-ին Շենավանի գյուղապետարանում տեղի ունեցավ համայնքի ղեկավար Ա. Մկրտչյանի առաջին կիսամյակում կատարված աշխատանքների հաշվետվությունը՝ մասնակցությամբ գյուղապետարանի, միջնակարգ դպրոցի, բուժ. ամբուլատորիայի աշխատակիցների, ինչպես նաև համայնքի ակտիվ բնակիչների՝ ընդամենը 36 մարդ :

Նախագահությամբ՝ Ա. Մկրտչյան-----ի  
Քարտուղարությամբ՝ Հ. Առաքելյանի

Համայնքի ղեկավար Ա. Մկրտչյանը իր հաշվետվության մեջ մանրամասն շարադրեց հաշվետու ժամանակաշրջանում համայնքում կատարված աշխատանքները :

1. Ըստ հաշվետվության 2011թվականի երկրորդ կիսամյակում բարցրացվել էր համայնքի 252 բնակելի տների գազաֆիկացման հարցը, որը այսօր գտնվում է Արմավիրի մարզպետ՝ Ա. Ղահրամանյան ուշադրության կենտրոնում :
2. Շենավան համայնքը մարզի խաղողագործական խոշոր տնտեսություններց է, բոլոր խաղողագործների հետ կնքվել է խաղողի մթերման պայմանագրեր :
3. Կազմակերպվել է ծիրանի մթերումը :
4. Գյուղապետարանի աշխատակիցների անմիջական մասնակցության շնորհիվ գարնանը կատարվել է համայնքի ռոտոման ներտնտեսային ցանցի մաքրման աշխատանքները :
5. Համայնքի հուշարձանի տարածքում կատարվել է ծառատունկի աշխատանքներ :
6. Համայնքի ավագանու անդամների անմիջական օժանդակությամբ պարբերաբար կատարվում է աղբահանության աշխատանքներ :
7. Հաշվետու ժամանակաշրջանում վերանորոգվել է համայնքին խմելու ջրով ապահովող 2 խորքային հորերի պոմպերը :
8. Վերանորոգվել է խմելու ջրի խողովակների վրա առաջացած վթարները :
9. Համայնքի բնակչությանը խմելու ջրով ապահովելու համար ծախսված էլեկտրաէներգիայի գումարը վճարվել է համայնքի բյուջեի հաշվին :
10. Համայնք է ներկրվել պետության կողմից հատկացված ազոտական պարատանյութ և դիզ. վառելիք, որը բաժանվել է բնակիչներին :

11. Ընթացքի մեջ է հողի հարկի և գույքահարկի գանձման աշխատանքները :

Համայնքի բնակչության կողմից բարձրացվեցին հետևյալ հարցերը , որոնց լուծման համար ակնկալում են Արմավիրի մարզպետ՝

Ա. Ղահրամանյանի աջակցությունը :

1. Օգնել ամբողջությամբ գազաֆիկացնելու Շենավան համայնքը :

2. Համայնքի տարածքում խմելու ջրի նոր ջրագծի անցկացում :

3. Կուլտուրայի տան և մանկապարտեզի շենքերի վերանորոգում :

Նիստի նախագահ՝ Ս. Ղահրամանյան

Նիստի քարտուղար՝ Ս. Ղահրամանյան